

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊԻ ՎԵՐԳՈՒ ԵՎ ՀԵՔԻԱԹԻ ՔԱՉ ՆԱԶԱՐ

Ս. Մ. ՄԱՀԱԿՅԱՆ

Աշխարհի ժողովուրդների բանահյուսության մեջ, դեռևս հին ժամանակներից սկսած, տարածված է «Քաջ Նազարը» գրույցների կամ հեքիաթի տեսքով, հաճախ իբրև երկրորդական թվացող մանրասպառում, որ մտել է համեմատաբար ավելի ծավալուն երկերի մեջ՝ ունենալով իր յուրահատուկ կերպը, միջավայրը, վարքն ու հոգեբանությունը, աշխարհագրությունը, կենցաղակյանքային գունազարդումները:

Քաջ Նազարն, ըստ բանահյուսական տարբերակների, սովորական մարդ չէ, այլ բոլոր ժամանակներին հարմարվելու կերպունակ մի անհատ, որի մեջ խտացված են երկու իրար հակադիր եւ նույնքան ծայրահեղ գծեր՝ 1) Վախկոտ-Անճարակը եւ 2) Ավազակարար-Քաջը:

Արտաքուստ, քերեւս, սրանք իրար անհարիւր են, զուգահեռված եւ անհամատեղվող մեկ անհատի, մեկ կերպարի մեջ, սակայն, ինչպես ցույց է տալիս հեքիաթի նազարականության տարբերակների ողջ հաստիքը, առաջինը ոչ թե սովորական կեցվածք է, այլ իրավիճակ, իսկ երկրորդը՝ բնագոյակալական տարրընթաց մուլտիպլ, որոնք ինչ-որ տեղ, ինչ-որ չափով փոխկապակցված դրսեւորումներ են՝ փոխադարձաբար լրացնելով միմյանց:

Այսպիսին է Քաջ Նազարը (այլ անուններն ընդհանուր առմամբ նոր բան չեն ասում) ինչպես հայկական, այնպես էլ այլ ժողովուրդների՝ վրացական, չեչենական, քալիչական, կաբարդինական, քաթարական, ավարական, այդ քիչում նախ ուսական եւ գերմանական բանահյուսական տարբերակներում: Դրանց համեմատական քննությունը հաստատում է, որ թե Արեւելքի եւ թե Արեւմուտքի ժողովուրդների կենսափոխափայտության մեջ, Քաջ Նազարը որպես երգիծանք, մշտապես ունեցել է իր հաստատուն տեղը, նազարածին միջավայրը, աշխարհը կառավարելու գաղափարաբանությունը, ինքնաստվերը, ինքնակա հերոս դառնալու հասարակական հիմքը, ժամանակների հետ հարմարվելու կերպունակությունը, որն ավելի է ծավալվում, ավելի է փաղանգվում բարդ ու ճակատագրական, ժողովրդի հիշողության մեջ հայտնի՝ խառնակ ժամանակներում:

Քաջ Նազարն այսպիսով խառնակ ժամանակների հերոս է, հաճախ այնքան երազված ու երեւակայված, որ չես էլ կարող պատկերացնել, թե նա հողեղեն է, իրական եւ պատրաստ ահագնորեն առաջ մղվելու եւ հախառն թափով գործելու, թե արդեն կան նպաստավոր պայմաններ՝ նրա աշխարհ գալու եւ երկիր կառավարելու համար կա պարարտ հող:

Բանահյուսական տարբերակների մանրակրկիտ քննությունը գրականագետ Վահագն Սարգսյանին բերել է այն համոզման, որ յուրաքանչյուր ժողովուրդ, այնուամենայնիվ, հերոսականի դիմաց ունի նաեւ վախկոտն ու արգահատելին, ճիշտ եւ ճիշտ հայկական հեքիաթի Նազարի պես, Նազարի նման:

Նյութի ընդգրկման ծավալի մեջ «Քաջ Նազարի» ուսական եւ գերմանական տարբերակներում, հերոսի բեւեռականությունը, այնուամենայնիվ, չունեն հայկականի ծայրահեղ գծերը, կոնֆլիկտի սրությունը, այլ դատապարտված է դեպի գանդ ստրակող պատենապաշտ անհատի եւ արկածայինի, ու ամեն ինչ ասվում է մեղմ ժպիտի տակ:

Այսուհանդերձ, ժողովուրդը սուր ծաղրի փոքր թվացող պաշտոնից մինչեւ արքայական գահին հասած անճարակներին, անբաններին, հանրության ու ժողովուրդների կողմից արգահատված անճանց:

Վախկոտությունը, քաղաքական անհեռատեսությունը, հայրենի երկիրը կործանման եզրին հասցնող հոգե-ժամացել են ժողովրդի արգահատանքին, եւ նրանց գործունեությունը ներկայացվել է ոչ միայն «Ողբ»-երով, այլև գավեշտով ու ծաղրով, ցուցանքների կերպի միջոցով, իսկ հեքիաթ-գրույցներում՝ նազարատիպ ձևերի տակ՝ մտնելով ավելի ծավալուն երկերի սյուժեի մեջ, ինչպես որ այդ առկա է հայ ժողովրդական վեպի «Մասնա ծոերի» պատմությունում եւ տարբերակներում, որտեղ Մասնա տան մեծերի կողքին կա նաեւ վախկոտության մարմնացում Վերգոն (որոշ տարբերակներում նաեւ Վեճո, հավանաբար նկատի է առնվել նրա կովական լինելը):

«Մասնա ծոերի» Վերգոյի եւ հեքիաթի հերոս-Քաջ Նազարի միջեւ կան ընդհանրական որոշակի գծեր, հոգեհարազատություն, մեծակցություն: Այսպես՝ Վերգոյի հոգեւոր աղքատությունն ավելի է պսակագերծ լինում հատկապես Դավթի դիակը Մասուն հասցնելու պահին, երբ Խանդութ Խանումը սազնապով սպասում էր ձիավորներին, Դավթին: Վերգոն առանց այլեւայլության պատրաստվում է Խանդութին կնոթյան առաջարկություն անել՝ հաշվի չառնելով ոչինչ եւ ոչ մեկի, մանավանդ ողբացյալ կնոջ ծանր հոգեվիճակը, եւ Մասնա չքնաղ տիրուհին ինքն իրեն մրմնջում էր.

Վտոր արժեց, էգավ:  
Վտոր չարժեց, էգավ,  
Իմ շահ-բալաբան Դավթ չէգավ:

Շատաչում է պատասխանը՝

Կը պակսի շայ-բալաբան Դավթը,  
Բզի չպակսի պարոն-իրիկ:

Խանդութի տված պատասխանն ավելի սուր է, քան դրան սպասում էր նենգամիտ Վերգոն՝  
Դավթի պեստ մարդ մեռնի,  
Ես գամ, բզի պեստ մա՞րդ առնիմ՝:

Ահա թե ի՞նչ. վախկոտությունը մարմնացնող Վերգոն, որ տեղի ունեցող մեծ ու փոքր իրադարձություններից հեռու, աննկատ եւ իր գոյությանը եղբայրների՝ Սիերի եւ Օհանի, ապա նաեւ Դավթի շուքի տակ թաքցրած, բոլորովին երկրորդական դեմք էր, այժմ արդեն ներկայանում է Ազնանց տան մեծերի պես եւ նրանց հավասար, փորձում է քայլ անել՝ հասնելու Դավթի անվանն ու փառքին: Խանդութին արած իր առաջարկով Վերգոն խախտում է ոչ միայն հայոց ավանդապահությունը, այլև քրիստոնեական կարգավարքը եւ ամուսնության անմեղ թվացող ճանապարհով կնոթյան տանել եղբորորդու՝ Դավթի կնոջը՝ իբրև «պարոն իրիկ» (ամուսին):

Դավթին ու Խանդութը էպոսում ներկայացված են իբրև հավասարներ, ուժի եւ զեղեկության մարմնացյալ կերպարներ. նրանք հենց այդպես էլ՝ Մասնա Տան լուսավոր աստղերն են, պայծառ ու հավերժափայլ:

Իսկ այժմ սպանված է Դավթը, էլ չկա նա: Մասնա քարածայրերից մեկի գլխին տազնապով է սպասում Խանդութը:

Դրամատիկ ու հուզիչ պահ է, վշտից ու ցավերից ահագնացած: Խանդութը եւ սասուցիները աստիճանաբար հուսախաբ են լինում, երբ ախրամած քայլով նրանց է մոտենում համբատատան սգո թափորը: Զիու վրա կապված է Դավթի դիակը: Նա մեռած է:

Տեսարանը սուկալի է եւ ահավոր:  
Ահա եւ այս պահին գլուխ է բարձրացնում ճիվաղակերպը՝ իր անսպասելի առաջարկությամբ:  
Այս քայլին չի դիմել եւ ոչ մի Նազար:

Նույն Վերգոն հիշյալ տարբերակի հետագա տեսարաններում կրկին է հայտնվում: Դա Փոքր Սիերի Բաղդադում պատանդ պահվելու օրերին էր, երբ Զեմով Օհանը հորդորում-հրամայում է, որ բոլորը զնան եւ գորավիզ լինեն Սիերին:

Խոսքը ուղղվում է նաև Վերգոյին:  
Էպոսի հիշյալ տարբերակում Վերգոն ասես մուսուլման է մատնվում, վիպական որևէ գործողության մեջ չի հիշվում նրա անունը: Սակայն, երբ Փոքր Սիերը վերադառնում է Մասուն, կրկին հայտնվում է Վերգոն, եւ ոչ միայն նա, այլև նրա կատարելատիպը՝ Աստղիկ Յուլաձինը:

Հայր ու որդի լրացնում են միմյանց: Վերգոն վախկոտ էր, նենգադավ, կովարար, կծծի, Աստղիկ Յուլաձինը՝ դաժան, ահեղ եւ ահավոր: Աստղիկը օղապարիկով էր ճակրում երկնքում, հրեղեն նետեր արձակում մարդկության վրա:

Փոքր Սիերն ու Աստղիկ Յուլաձինը կանգնած են դեմ-հանդիման: Տեղի է ունենում ահավոր մենամարտ, Սիերից անբաժան էր նրա կինը՝ Գոհարը:

Ահա այդ տեսարանը:  
Սիերը վերադարձի ճամփին հանդիպում է Աստղիկ Յուլաձինին.

*Որ հ'էլավ էգավ Մասուն,  
Ասրդու Յուլաձին էղոր ճամփեն կը պահեր  
Ուխտ էր էրի, որ զՍիեր սպանա,  
Սիեր չհասնի ուր մուրագին  
Մեզ գիշեր լը չքնի Գոհարի ծոց:  
Սարախաբան շուր Սիեր հէլավ դու:  
Ասրդու ցուրու հավադան էգեր էր,  
Էգավ բռնեց Սիերի վրեն:  
Քարի կարկուտի պեսը վերեւեն  
Նեպ ու անեղով կը զարգեր,  
Սիեր հրմլա խալխաս բռնեք էր,  
Կըծկեր էր խալխարնի փագ:*

Գոհարն այլևս չի համբերում եւ դիմում է Աստղիկ Յուլաձինին, թե՛

*- Ասրդու Յուլաձին, իմ Սիերին մը զարգի,  
Իմ կյանք գուզի՞ս, փամ բզի  
Սիեր էրեղ շար հերսոտակ,  
Ըսեց- Չա՛նըս, ես կ'ըսիմ  
Դեմի իմ Ասծուն իմ դրոք չ' քալիմ,  
Թե չէ՛ Ասրդու Յուլաձինի սպանել չարին ս,*

<sup>1</sup> Համեմատելով բերված են «Մասնա ծոեր» գրքի Բ հատորից. լույս է տեսել 1944-ին, Երևան, էջ 223-224, բանասաց Մանուկ Թորոյան (Թորո Մանուկ), Արաշկերտի Խաստուր գյուղ, գրի է առել Կ. Մելիք-Օհանջանյանը:

**Չնեղ ու անեղ դեղեց Մեեր,  
Չարգեց, Աստղու Յոլածնին բերեց ցած...<sup>1</sup>:**

Փոքր Մեերը սպանում է Վերգոյի վիժվածքը դաժանաբար Աստղիկ Յոլածնին և երգում աշխարհից վերացնել կոտորածը:

Բայց սրանով, ինքնուրույն, չի ավարտվում Վերգոյի խարդավանքներն ու դա ստոր գործելակերպը, առանձին տարբերակներում ներկայացված է իբրև ութ տղաների հայր, փառատենչ ու ամբարտավան:

Այսպես՝ Վերգոն Փոքր Մեերին համառորեն չի հանձնում Սասնա Տան Գնամակալությունը, գահը, ավելին՝ դահճին հրամայում է կտրել Մեերի գլուխը, կարգադրում է որդիներին վերացնել նրան. «Մեեր տեսավ, որ սրերը մերկ արեցին, իրա վրա կարշավեին. իրա ձեռ ոչինչ չկար, քամակին տեսավ մի կոնի կար, ետ քաշվեց, երկու ձեռքով դժնիկի բողազը բռնեց ու հույ տվավ, դուրս քաշեց: Նորա քորը երկու գագ գեռանից դուրս եկավ, և իրա գործիքի պոչիցը բռնեց, ամեն մի տղին մի-մի հաստ խփեց, ձիերից վար թափվան: Եվ հետո կոնները ճեղքեց որպես ջուլ, որ խուրձ կկապեն, ութ եղբորն էլ վրան դրեց, պինդ կապեց մի խրձի պես և բոլորի որսը առավ ու Բեռի Թորոսի տունը գնաց<sup>2</sup>»:

Բանասիր Մարգիս Հակոբյանի պատումի Մեերը սպանում է իր վրա հարձակվող Վերգոյի ութ որդիներին ու խռովաբան է հեռանում Սասնուց, հասնում Հալեպ ու ընկնում կատարյալ դժոխք:

Քավառեցի Հակոբ Նրգեյանի պատումում Աստղիկին տրվել է Կախարդասարք մականունը: Սա, հանկարծակիի բերելով, գուրգուլ խփում է Մեերին և գետին գլորում: Գոհարը կրկին առաջ է ընկնում և աղերսում, որ Աստղիկ Կախարդասարքը չսպանի Մեերին:

Այստեղ կա ուշագրավ դիմողական մի մանրամասն՝ «Ամա՛ն, Աստղիկ եղբայր» (ըստ Ալաշկերտի և Մշո ծիսակենցաղային սովորություն՝ հարսը տեղորին դիմում է *եղբայր (եխպար)* հարգալից կոչումով):

Միանգամից տեղերը փոխվում են. Մեերն է Աստղիկին բերում Գոհարի մոտ: Ահա և Աստղիկն է խնդրում Գոհարին, որ իրեն Մեերի ձեռքից ազատի:

Աստղունքն ու Մեերը մեծամարտում են: «Աստղունք լե փահելան էր, որ աչքի կ'ընկներ օդի մեջ բռնելով», -ասվում է նույն տարբերակում: Աստղունքը բռնամի էր Խոր Մանուկին, որը փայտեղ է. Յոլածնի կնոջը, և այդ պատճառով էլ «վերելից ընդոր գլխում կրակ կգարգեր հ'ըմեն ժամանակ ու կուզեր ուր հայի՞ք առնի, ընդոր սպանի»:

Խոր Մանուկը ստիպված գնում է Սասուն և դիմում թագավոր դարձած Վերգոյին, որպեսզի նա սաստի Աստղիկ Յոլածնին, և հաշտություն կնքվի հարազատների միջև:

Հետաքրքրական մի քառյակ կա, որ Մանուկն ասել է երգածայն.

*Չարգեց ընչի չորի Հալեպ  
Ու չորվեց հանեխար մե օր,  
Չարգեց ընչի չորի Սասուն,  
Հասի՛ր, օգնի՛ր, փրկի՛ր դու ինչ  
Ո՛վ քաջ Վեեր:*

Ուշադրության արժանի է հասկապես վերջին երկտողը, որը հնչվել է իբրև ուղեկցողները: Սա հետագայում կարող էր հավելվել «Ո՛վ քաջ Նազար» ձևով:

Վերգոն Դավթից հետո խորամանկորեն բազմել էր Սասնա գահի վրա և իրեն հռչակել թագավոր (հավանաբար՝ կառավարիչ), բայց Խոր Մանուկի հորինած երգում հորջորջվում է իբրև Քաջ Վերգո:

Վերգոն ոչ միայն մերժում է այն խնդրանքը, այլև կարգադրում. «Է՛յ, Աստղունք, գա՛րկ, ինչքան որ քե՛քը կուզա, ես օգնել չըմ կունս»:

Որ Աստղիկ Յոլածնին Վերգոյի վիժվածքն է, հավաստվում է Ապարանցի Բարսեղ Մահակյանի բանասացական տարբերակում, այստեղ նա հիշվում է Աստղ Երզնկացի անունով.

*Աստղ Երզնկացին ըսեց,  
- Մեեր, դու իմ ախպոր փղեկ ես,  
Ես քեզի հեպ կռիվ չըմ էնի.  
Խոռ Մանուկ իմ դուռնանն ա, բոլ գա, կովեկը:  
Ըսեց.- Խոռ Մանուկ չի կովի:*

Այդպես էլ Մեերի և Աստղ Երզնկացու միջև հաշտության չի կնքվում, ընդհակառակը՝ նրանք մեծամարտի են բռնվում, ընդ որում՝ Մեերի նետած գուրգուրը վերթետում-անցնում են Աստղիկի թեփի տակով և չեն հասնում նպատակակետին, մինչդեռ՝

*Աստղ Երզնկացին էնքան զարկեց,  
Որ Մեեր հիվանդացավ:  
Աստղ Երզնկացու նշանունն հ'Է լավ բալկոն,  
Աչքեր դեղեց, գլուխ կապեց, ծծեր բալեց դուս:  
Ըսեց.- Աստղ Երզնկացի,*

<sup>1</sup> Նշվ. գիրքը, էջ 346-347:

<sup>2</sup> Մասնա ծոեր, հ. Գ., մասն երկրորդ, Ե., 1951, «Զյալառեցի Հակոբ Նրգեյանի պատում» (սերվում է Ալաշկերտի Խաստուր գյուղի բանասացների դպրոցից), էջ 221:

**Քու ախպոր փղեկ երեխա ա, խնայա,  
Քեզի ես ծծերի մեջ կը պախեմ:  
Աստղ Երզնկացու աչքն ընկավ իրա նշանունին,  
Մեեր գուրգ մի զարկեց,  
Աստղ Երզնկացին էղավ պարս կպոր՛:**

Այսպիսի վախճան ունեցան Յոան Վերգոն և նրա երկնադիվային որդին՝ Աստղիկ Յոլածնին:

Ահավոր է, երբ վախկոտն է դառնում երկրի կառավարիչ և նստում թագավորական գահին: Բնության մի զարհուրելի օրենքով վախկոտն այս դեպքում լինում է ավելի դաժան ու դժնատեսիլ:

Այդպիսին էր ժողովրդական վեպի Վերգոն, այդպիսին է և հեքիաթի Քաջ Նազարը:

Ուրեմն եթե խոսքը գնում է Քաջ Նազարի նախատիպի սերման մասին, պետք չէ նրան փնտրել այլ ժողովուրդների նմանաբանությամբ հեքիաթ-գրույցներում, քանի որ նրա լավագույն տիպոթիմակը կա «Մասնա ծոեր» մեծածավալ վեպի պատումներում ու տարբերակներում:

Իսկ հայկական ժողովրդական հեքիաթներում՝ երեք եղբայրներից առաջին երկուսը սովորաբար ներկայացված է թույլ ու անճարակ, հաճախ նաեւ վախկոտ, որը և գտնում ենք Վերգոյի և Օհանի կերպարներում:

Հարկ է նշել, որ էպոսի Վերգոն թեև երկրորդական, բայց և ընդգծված կերպար չէ, որովհետև չունի իր տեսակի պահպանման փիլիսոփայությունը, իշխանության հասնելու բախտի պատահական թռիչքները, նույնիսկ Խանդութին կնության վերցնելու փորձն անելիս հենց այնպես ծառանում է ավանդամուտության և կոտորածի սովորությունների դեմ:

Վերգոն, Դավթից հետո, օգտվելով մեծի ժառանգական իրավունքից, դառնում է Սասունի օրինական կառավարիչ (թագավոր), որը պարտավոր էր հանձնել միայն Դավթի որդուն՝ Մեերին: Բայց այդ քայլին չի դիմում: Վերգոյի կրկնակը, գուրգուտվերը, նրա սարսափելի տեսակը Աստղիկ Յոլածնին է, որ սովորական մարդ չէր, այլ երկնաբնակ՝ *հավաղանով*<sup>3</sup> երկնականաբար ճախրող, ուներ հրեղեն նետեր և ցանկացած պահին կրակ էր փայտում անմեղ մարդկանց գլխին:

Այստեղ պետք է մի կողմ թողնել այն միտքը, թե Աստղիկ Յոլածնին, նրա *հավաղանը*, կայծակի նետերը, վերելից կովելու ձեռքը հայ մայրու ստեղծագործ մտքի և երեակայության արդյունք են՝ դրական իմաստով, որ մեր ժամանակներում միայն դարձան իրական, այլ թեկուզեւ այդպես դատապարտվել է, որովհետև հենց նույն Չարք, զենք ու հանդերձանք ունենալու դեպքում, դառնալու է հակամարդ, պատրաստ է կործանել ամբողջ աշխարհը:

Սա է ժողովրդի իմաստությունը:

Եվ այսպես՝ հայ ժողովրդական հերոսական վեպն ունի նաեւ իր կատակերգական հերոսները, որոնք գործում են ըստ սյուժետային գծի, իրենք գորտի նման ապրում են ճահճում և պատրաստ վճռական պահին թռիչք գործելու դեպի բարձունքը՝ բախվելու Դավթին, Մեերին՝ վերջակետ դնելով իրենց գոյությանը: Էպոսում նրանք ոչնչացնում և շարքից դուրս են գալիս, ինչպես որ այդ տեղի ունեցավ հանրահայտ Վերգոյի հետ:

Հայ ժողովրդական վեպում Մանասարի, Մեծ Մեերի, Դավթի, Փոքր Մեերի, այդ թվում նաեւ Բեռի Թորոսի բացառիկ իրավական հերոսական միջավայրում, Վերգոն որքան էլ փորձեր դավեր նյութել և բազմեր կառավարչի թախտին, անպայման աննշան մի անուն էր մնալու ընդմիջում: Այլ հանգամանքներում նա կարող էր երկարաձգել իր գոյությունը, սակայն նոր ու փոթորկուն ժամանակներում անհրաժեշտաբար պետք է հանդես գար Փոքր Մեերի դեմ հանդիման, պետք է դիմեր խորամանկության Մեերին ասպարեզից դուրս շարտելու համար:

Եվ եկավ Վերգոյի ժամը, որովհետև էլ չկար Դավթիքը. դեռ մանուկ էր Մեերը, իսկ Չենով Օհանը ու Բեռի Թորոսի կառավարիչ դառնալու շրջանն անցել էր: Վերգոն եկավ և այս անգամ ոչ թե վախկոտի կերպի մեջ պատենավորված, այլ իշխանատենչի մի անսովոր մոլուցքով:

Եվ ընդամենը՝ մեկ-երկու, Վերգոյի՝ այդ չնչին մարդու մեջ գլուխ է բարձրացնում Ես-ը. հետեւանքը՝ Խանդութ Խանունին կնության առաջարկությունն է, որը թեև մնում է օղից կախված երազ, բայց հոգեպես ցնցում է Մասնա չքնադազեղ տիրուհուն:

Խանդութը գահավիժում է և մեռնում:

Վերգոն հավերժական կերպար չէ: Նրա գոյությամբ ժողովուրդը հիշեցնում է, որ երբեմն-երբեմն վերգոյականությունը եւս կարող էր ունենալ գործունեության լայն ասպարեզ, դառնալ նույնիսկ երկրի կառավարիչ, որոգայթել Աստղիկ Յոլածնի նման դաժան ու մարդատյաց հետնորդ, որից պետք է զգուշանալ:

Վերգոն ճիվաղակերպ է, նենգ ու դավադիր, ողորմելի ու լայրձուն, եղկելի ու սոսկալի, որից էլ մասնավորապես սերվել է Քաջ Նազարը:

Գարեգին Մրվանձտյանի գրառած «Դժիկոն» արեւմտահայ բնաշխարհի ու միջավայրի ծնունդ է, ինչպես և նրա հերոսը: Ներկայացնում է մի հեքիաթ-գրույց իր բնական վիճակով: Միջավայրը գրեթե նույնն է, ինչ Վերգոյինը:

«Դժիկոն արքատ ու անբախտ մարդ էր. իր բոլոր ունեցածն էր երկու այծ ու մեկ կով, կովն ալ տոճըզան<sup>3</sup> էր (վերվեր ցատկոդ): Դժիկոնի կինը անզգամ էր, շատ նեղություն կուտար երկան, կըսեր. «Գնա հեռի երկիրնե-»

<sup>1</sup> Մասնա ծոեր, հ. Գ. էջ 527:

<sup>2</sup> հավաղան - օդապարիկ, օդասարք:

<sup>3</sup> Թեև Գ. Մրվանձտյանը տոճըզան բառը բացատրել է իբրև «վեր-վեր ցատկոդ», սակայն բուն իմաստն է՝ «ալ կաթնատու և անպտուղ»:

րը, դատում ըրե, վաստակ ըրե, տուն տեղ շինե, հագուստ կապուստ բեր ինձի, եզներ ու մաքիներ գնե, ձի գնե» եւ այլն<sup>1</sup>։

Չի ունենալը լակ ցանկություն չէ, բայց մի քիչ անց՝ «Էլավ հեծավ ձիւն՝ եւ իրկուսը գեղի մոտերը խջավ»։  
Ու՛ն ձիւն, երբ նա էր այդ *պռնդկան* կովի հետ միայն ճամփա ընկել։

Դրժիկունը վախչում էր իր անզգամ կնոջից եւ ինքն այդ մասին խոստովանում է՝ «Առնեմ գլուխս կորսվիմ այս անզգամ կնկան ձեռքեն»։

Ահա սա է եղել տնից հեռանալու գլխավոր պատճառը։

Երկրորդ փաստարկը դարձյալ կապվում է առաջինի հետ, ինչպես՝ «խտով տեղերը կովը կ՝ արածեր, ինքն ալ կքնանար, ճանճերը կխայթէին զինքն. անիծեց կինը եւ ուժով մը իր մեկ ափի մեջ բռնեց ճանճերը, ճմռեց ու համրեց, որ ճանճն մեկուց սպաներ էր»։

Դարձյալ կինը, նրա ընչաքաղցությունը, որն էլ դարձավ Դրժիկունի՝ սեփական տնից հեռանալու հիմնական պատճառը։

Երրորդ փաստարկը ուղղակի չափազանցություն է եւ յուրահատուկ է հեքիաթին՝ յոթ ճանճը Դրժիկունը դարձնում է յոթ հոգի եւ «քաջալերություն եկավ վրան»։

Այդպես էլ զրեւ է տալիս մի պատահական դավիշի իր քաջաբերականը ու կապում կովի ճակատին՝ հետեւյալ մակագրությամբ՝

**Եւ Դրժիկուն եւ,  
Մեկ չեքրով յոթ հոգի սպանած եւ։**

Եղջուրավոր *պռնդկան* կով, որին եւ կթում էր, եւ հեծնում, մի բան, որի իրական լինելը համոզիչ չէ, բանի որ *պռնդկան* կովը կաթ չունի եւ նրան հնարավոր չէ հնազանդեցնել, նույնիսկ հեծնել։

Մրանք սուկ իրաբանական հակասություններ չեն, այլ հեքիաթի նյութից բխող անհամամասություններ, շարադրանքի կառուցվածքային առարկայական հակադրություններ, մի աեսակ հում նյութ, թեւ Դրժիկունի՝ հեզանքով ստեղծած քաջաբանականը իր մեջ ունի երկիմաստություն՝ մարդը մի ճոռումով սպանել է *յոթ*, ավելի լայն իմաստով՝ *յոթ* շունչ, հետեւապես՝ *յոթ* հոգի, չէ՞ որ ըստ ժողովրդի մտածելակերպի՝ յուրաքանչյուր էակ ունի եւ հոգի, սխալը բացվելու դեպքում Դրժիկունը արդեն պատրաստ էր տալ նման բացատրություն, դրանով էլ բավարարվել ու արդարացում գտնել։

«Դրժիկունի» սյուժետային առանցքը քաջածնության հրովարտակն է, որը կապվում է *պռնդկան* կովի ճակատին՝ պոզերի մեջ։

Չորրորդ փաստարկը Դրժիկունի հորինած բանաձեւումի եւ իր սեփական անձի բուն էության միջեւ եղած հակասությունն է, որից էլ բխած վախն ու սարսափը սկսում են կրծել նրա հոգին։

Սա, իրոք, բնական է եւ հոգեբանորեն պատճառաբանված։ Այս փաստարկը հիմնավոր է, իրական, այլ խնդիր է, երբ շրջապատի մարդիկ, կարդալով Դրժիկունի քաջաբանականը, սկսում են սարսափել, բերնեբերան տարածել, թե աշխարհ է եկել մի մարդ, որ մի ձեռքով սպանում է յոթ հոգի։ Ապա հաջորդում են յոթ կտրիճ եղբայրների ինքնական հնազանդվելու, միակ քրոջը Դրժիկունին կնության աալու, հարսանյաց հանդեսի արարողությունները, շքեղ հագուստները, ապրելու նոր պայմանները եւ այլն, եւ այլն։

Զնած էր Դրժիկունը, իսկ բախտը՝ արթուն, քանի որ նրան հնազանդվել եւ այժմ՝ էլ խոնարհվում են դյուրահավատ հսկաները եւ նրանց համակիրները։ Դրժիկունին *աղա* են հոչակում ծանոթ միջավայրում անուն հանած յոթ հսկաները (ըստ Մրվանձտյանի՝ կտրիճները)։

Ի՞նչ ունեւ Դրժիկունը. մի կով, որն «ասոնց գալեն կը խրտչի, տրոճիկ կընե եւ կբառաչե։ Այս ձայնեն վեր կը թոի Դրժիկուն, տեսնելով յոթն հոգի իր առջեւ, անբրոց կը վերցու՝ դողալով հեռու կը կենա»։

Միակ փոխադրամիջոցը եւ ապավենը՝ Տոճղկան կովն էր, որն արդեն խրտչել-փախել էր, զենքը միայն անբրոց էր, հույսը՝ դողալը, ահա այն միջոցները, որոնք՝ մտնում են Դրժիկունի քաջաբանական կազմի մեջ։

Վերջապես, խոսում-խորհրդածում է բախտի ձին քամբած Դրժիկունը։ Այն հարցին, թե՝ «Աղա՛, քո ձիւն, քո զենք, քո ծառաներ ու՞ր են թողեր, հրամանք արա, երթանք բերենք», Դրժիկուն կրսե. «*Չենք ու չի վախկոտ մարդկանց ապավեն է. ես երբեք գործածած չեմ, երբեք պեպր չէ եղած, երե մեծ կովի բռնվիմ, այն ապեն չի եւ զենք կը գործածեմ. իսկ ծառայի երբեք պեպր չունիմ, աշխարհն իմ ծառայներն են. դուք պեսասք, որ ես մեկ փայլք եւ կով ունենալով, ապահով միևնչեւ այսպեղ հասեր եմ. ես Դրժիկուն եմ, մեկ ափով յոթն հոգի կ՝ սպանեմ*»։

Ապա հաջորդ պատճառաբանությունը. չորս փաշաների զինական ուժի դեմ ուղարկում է իր յոթ հսկաներին եւ նրանց բանակները։ Կրիստիական պահին հավաքվածների հորդորանքով Դրժիկունը վճռում է՝ «*Երբա կռիվ եւ զինքը չգե սուրբերու բերննը, մեռնի, ազարվի խայրառակութենն։ Չին իմացալ, որ իր հեծյալն խաշիմ (անվարժ է), աքավ գլուխն ու բռավ... Դրժիկունի հոգին մնացել էր կորեկի մը չափ, կը պարսախի ծառ մը, կը պլլվի անոր ճյուղերուն, չին փակեւ կը փակչի, դու մի բսեր ծառը փուր էր, բափեն ծառը բոքահան կը լինի, այլեւս քշնամյաց վրա հոգի չ՝ մնար, զիրար կոտորելով կը փախչեն...*»։

Դրժիկունը հաղթում է քշնամիներին. նրանց, ովքեր նախապես փորձում էին հարսնության տանել յոթ հսկաների միակ «խորտակ քրոջը», սակայն Դրժիկունի հայտնությունը խառնել ու խափանել է ամեն ինչ։

Այս բոլորից հետո ի՞նչ է մնում սույն հեքիաթ-գրույցը պատմողին, եթե միայն Դրժիկունին հոչակել «դյուրացազն փեսա», եւ այդպես էլ լինում է՝ «Յոթ եղբայրները կը վազեն, կը գրկեն իրենց դյուրացազն փեսան եւ անոր ունեթում տակ կ՝ իյնան»<sup>2</sup>։

Միանգամայն ճիշտ է, որ՝ «Եվ Դրժիկունին էլ վիճակվեց դառնալու Թումանյանի «Քաջ Նազարի» նախահիմքը, հիմնարմատը, որից սկիզբ էին առնելու հեքիաթի վերնամասն ու բազային ճյուղավորումները<sup>3</sup>»։

Բայց թե ինչու՞ եւ ինչպե՞ս։

Այս հարցին պատասխանելուց առաջ անհրաժեշտ է նշել, թե ի՞նչ են ասում թումանյանագետները մեծ գրողի՝ բանահյուսական նյութերի գրական մշակումների մասին։

Այսպես՝ բազմավաստակ գրականագետ Հրանտ Թամրազյանը «Սասունցի Դավիթ» պոեմի ստեղծման առիթով գրում է. «Նա ժողովրդական խորհուրդներին տալիս է նաեւ հավերժական հնչեղություն, նորագույն դարում բացահայտում բոլոր ժամանակներին հարագատ այդ մարդասիրական խոհերը, այսինքն՝ հնագույն պատմությունների ոսկի հատիկը։ Բայց այդ ստեղծագործական բարդ աշխատանքին, նյութի բացահայտմանը եւ իմաստին նոր փայլ տալով հանդերձ՝ տեղ-տեղ Թումանյանը պոեմի մեջ կատարել է հավելումներ, որոնք թեւ չկան Լպոսում, սակայն շատ հարագատ են նրա ոգուն եւ պատմությանը, ընդհանուր տրամաբանությանը<sup>4</sup>»։

Հ. Թումանյանը հեղինակային միջամտություններ, հավելումներ, կառուցվածքային ճշտումներ է կատարել՝ ընտրելով հայ ժողովրդական առավել բարձրարժեք պատմություններն ու տարբերակները, ապա առանձնացրել ավելի մանր գործերում առկա վաստերը, փաստարկումները, ոչ միայն հաշվի է առել, այլեւ, դրանք գրական մշակման ենթարկելիս, գործի է դրել իր մտավոր ու իմացական ողջ հանճարը, *հավելումներից* բացի, վերականգնել ու վերագտել է դրանց ֆաբուլատիվ զիծը, մանրանկարչի բացառիկ հմտությամբ հարստացրել լեզվապատկերների շղթան՝ մաքրելով տվյալ պատմը խցանող ավելորդ տարրերից, Կոմիտասի նման նույն նյութի այլեւայլ տարբերակներից ընտրել է այնպիսի փաստեր ու պատկերներ, որոնք անցնելով թումանյանական գրական մշակման քուրայով, հավերժվել են իբրև «բյուրեղյա երկեր, ինչպես ասենք՝ «Սասունցի Դավիթը», «Քաջ Նազարը» եւ այլ գործեր։

Վ. Սարգսյանը ուշագրավ վիճակագրական հաշվարկ է կատարել՝ նշելով՝ «Հագարան բլուր» հեքիաթ պոեմի ստեղծագործական խմբումանը մասնակցում էին ժողովրդական 60 տարբերակներ... «Չախ-չախ բազավորը» սնուցվել էր մոտ 14 ժողովրդական աղբյուրներից, «Կոնատ աղջիկը»՝ 11, «Ծխողը»՝ 7, «Եղեմական ծաղիկը»՝ 21, «Կիկոսի մահը»՝ 4 եւ այլն<sup>5</sup>։

Միանգամայն ճիշտ է նկատել Հ. Թամրազյանը՝ գրելով, որ «Աստված Թումանյանին տվել էր ներքին տեսողություն՝ «անշուք, աննշան» փոքրիկ նյութի մեջ տեսնել ոսկե հատիկը, թաքուն խորհուրդը։ Եվ նա բացել էր այդ խոր հանքը ու փայլ տվել, հարստացել ու բյուրեղացրել<sup>6</sup>»։

Իհարկե, մեծ գրողն իր հանճարի ուժով թափանցել է ժողովրդական բանահյուսական հում նյութերի աշխարհը, ուսումնասիրել ու համադրել եղած բոլոր տարբերակները, նաեւ դրանց այլեւայլ արձագանքները՝ տարբեր ժողովուրդների մեջ տարածված միավորները, հեղինակային բացահայտ միջամտությամբ ստեղծել դրա կատարելատիպը, որ կարելի է համարել իրոք գրական մշակման ենթարկված լիարժեք երկ՝ թեւ Թումանյանը յուրաքանչյուր երկի համար ընտրել է լեզվական համապատասխան միջոցներ՝ բոլորովին չիրաժարվելով բարբառային բնարժեք ասույթները, ոճերը շարադրանքի հյուսվածքում ամրակայելուց, համակցելուց, փոխկապակցված ձևերի օգտագործումից։ Այս դեպքում Թումանյանը հասել է լեզվաբազմաձայնմանը, մի բան, որ հայ ժողովրդական երգերը մշակումներում կիրառում էր Մեծն Կոմիտասը։

«Երգը վերլուծելիս-համադրելիս Կոմիտասը,- գրում է նրա տաղանդավոր աշակերտ Հակոբ Հարությունյանը,- մեզ ուզում էր միշտ զգալ տալ, որ աշխատանքը չի վերջանում մի երգի սահմանում։ Այդ եղանակը դեռ կարելի է լրացնել ե՛ր սկզբից, ե՛ր վերջից՝ թե ծավալի եւ թե խորացման աեսակետից։ Եվ մենք վերլուծական համադրական աշխատանքը շարունակում էինք երգի սահմաններից դուրս՝ առանցքակետ պահելով միշտ նույն - այդ երգը,-սակայն ոչ թե դատարկ տարածության մեջ, այլ օգնության կանչելով տվյալ երգի բազմաթիվ տարբերակները, որովհետեւ դրանցից մեկնումեկի մեջ հյաճախ գտնում էինք վերլուծելիք եղանակի չերգված մի ձայն, համր մի հնչյուն, թաքուն մի թրթիռ, թերի արտահայտված մի շեշտ, թեթեւ ակնարկված մի ոճիմ, մտքով հասկացված մի ֆրագ, զսպված մի զեղում<sup>6</sup>»։

Այս ընդհանրությամբ էլ երաժշտագետ-փիլիսոփա Հ. Հարությունյանը Կոմիտասին եւ Թումանյանին համարում է երկու այնպիսի անգուղակական մեծություններ, որոնք հայ ժողովրդական բանահյուսական հում նյութ-

<sup>1</sup> Գ. Մրվանձտյան, Երկեր. Կ. 1, Ե., 1978, էջ 478:  
<sup>2</sup> Գ. Մրվանձտյան, նշվ. աշխատ., էջ 478:  
<sup>3</sup> Գ. Մրվանձտյան, նշվ. աշխ., էջ 475:  
<sup>4</sup> Անդ, էջ 475-476:

<sup>1</sup> Գ. Մրվանձտյան, նշվ. աշխ., էջ 475-476:  
<sup>2</sup> Վ. Սարգսյան, Քաջ Նազարի գրական հետազոտ., Ե. 1991:  
<sup>3</sup> Հ. Թամրազյան, Հովհաննես Թումանյան, Բանաստեղծը եւ մտածողը, Ե., 1995, էջ 276:  
<sup>4</sup> Տե՛ս Վ. Սարգսյան, նշվ. աշխատ., էջ 34:  
<sup>5</sup> Հ. Թամրազյան, նշվ. աշխատ., էջ 317:  
<sup>6</sup> Հ. Հարությունյան, Կոմիտասի գեղարվեստական արվանդանը, «Ժողովրդային գրականություն», N9, Երեւան, 1939, էջ 193-194:

ըր մշակում են եւ հասցնում կատարելության, առաջինը՝ երաժշտության, երկրորդը՝ գեղարվեստական գրականության ուղղություններով:

Հ. Հարությունյանի «Կոմիտասի գեղարվեստական ուրվանկարը» ուսումնասիրության անմիջական ազդեցության տակ Ավ. Իսահակյանը կատարել է ուշագրավ գրառումներ: Գրանցից մեկը սկսվում է այսպես.

«1905-6 թիվ...»

Նրանք երկուսը շատ նման էին իրար, հոգով, մայնությամբ: Նրանց ուրիշներն էին հարազատ՝ մեկը հայ երգի մեջ, մյուսը հայ խոսքի մեջ, երկուսն էլ հայ բազմադարյան ստեղծագործ ժողովրդի, ժողովրդական ստեղծագործության խառնուրդների մշակողները, այսինքն այնպես, որ եթե հայ գեղջուկը՝ երգող ու բանաստեղծող, նրանց չափ ուսում առներ, նրանց պես պիտի երգեր ու բանաստեղծներ իր երգն ու բանաստեղծությունը:

Երկուսն էլ գաում էին, բյուրեղացնում ժողովրդի ստեղծագործությունները: «Կոմիտաս-Թումանյանը», ժողովրդական ստեղծագործություններն սովորեցի դուրս էին բերում լույս աշխարհ... ոչ թե որպես մեքենական փոխադրիչներ, որոնց համար խոթք են ժողովուրդն ու ժողովրդականը, ոչ թե որպես ֆոտոգրաֆներ, որոնք չեն ներազդում նկարահանման առարկան, ոչ էլ այդ ժողովրդականը ծառայեցնում են իրենց ոչ-ժողովրդական կառուցումների համար: Նրանք ժողովրդականը վերցնում են ժողովրդից եւ ժողովրդականորեն մշակելով, վերադարձնում ժողովրդին: «Չքոյ ի քոյոց քեզ մատուցանիմք» - ինչպես Կոմիտասն էր սիրում արտահայտվել<sup>1</sup>:

Հովհ. Թումանյանը, ինչպես եւ Կոմիտասը, չէր բավարարվում բանահյուսական հում նյութի արձանագրումով եւ մի առիթով իր վայ-ընդդիմախոսներին ուղղակի խորհուրդ է տվել, որ իրենց «պսալիկ ուղեղում» պահել երկու բան՝ «բանահավաքն ուրիշ է, բանաստեղծը՝ ուրիշ, մեկի գրածի պատասխանատուն ժողովուրդն է, մյուսինը՝ ինքը<sup>2</sup>»:

Լիովին կարելի է համաձայնել հայ բանագիտության երախտավոր Ա. Գանալանյանի այն կարծիքին, որ «Բազմաթիվ ժողովրդական երգերից նա (իմա՝ Կոմիտասը՝ Ս.Ս.) ընտրում է դրանց լավագույն օրինակները, վերջիններս միացնում, ձուլում է ներքնապես իրար մոտ հարազատ նյութերին: Պահպանելով սկզբնաղբյուրների ամբողջականությունը՝ նա մեկը մյուսի բնական շարունակությունը հանդիսացող առանձին երգերից կազմում է համեմատաբար ընդարձակ նոր ստեղծագործություններ, որոնք ըստ ամենայնի, հարազատ լինելով ժողովրդական երգերի էությանը, յուրովի լրացնում, զարգացնում եւ հարստացնում են այդ երգերի մեղեդին եւ բանաստեղծական խոսքը՝ աչքի բնկնելով իրենց բովանդակության ու ձևի կատարելությամբ<sup>3</sup>»:

Գ. Սրվանձախյանի «Դժբիւրներ» նյութի բնական վիճակի ճշգրիտ արտացոլումն է, չնայած այն բանին, որ այնտեղ, ինչպես նշեցինք, առկա են փաստերի, փաստարկումների անհամամասնություն, չիմնավորված պատճառարանություններ եւ իրաբանություն, որոնք ոչ միայն համոզիչ չեն, այլև ունեն կառուցվածքա-հյուսվածքային շեղումներ ու տրամաբանական սայթաքումներ: Եվ գրողի, մտածողի, գրական մշակի խնդիրն է գտնել այդ հանրանյութը եւ նրանից անջատել ու կերակրել: Այդ ուղին փորձել են մտնել շատերը՝ Ավ. Իսահակյան, Լ. Շանթ, Սու. Չոբյան, Համաստեղ եւ ուրիշներ, սակայն հրապարակի վրա եղած գրական մշակման ենթարկված բոլոր տարբերակները՝ իրենց ձեռքովանդակային արժանիքներով գիշում են Հովհ. Թումանյանի «Քաջ Նազարին», որովհետեւ Թումանյանի մշակման մեջ Նազարը լրիվ ձեռքագտնված է խորամանկումներից, կերպարի մեջ մնում են միայն վախկոտ, թույլ, անօգնական մարդու հոգեբանական գծերը:

Վ. Մարգարյանի կողմից միանգամայն ճիշտ է նկատված, որ ա) «Թումանյանը սյուժետային գիծը հյուսում է բախտի արամագծով, որն էլ իմնականում պայմանավորելու էր հոգեբանական խորքով կերտված երգիծական կերպարի մոնումենտալությունը», բ) «բախտի տրամաբանական գիծը Քաջ Նազարին հասցնում է մինչև ժողովրդական մտապատկերում ամրակայված մարդկային ենարավորությունների ամենաբարձր կետին՝ քաղաքական գահին», գ) «իսկ քաղաքական գահին մոտեցող Քաջ Նազարը քայլ առ քայլ սպրտում է եւ իր կերպարային վերընթաց բնագարգացումը: Ու վերջնագծում նրա իմաստուն, փիլիսոփայական եզրահանգումը քաջության, խելիքի ու բախտի մասին ամենեւին պատահական չէ, քանի որ արդեն իսկ այն նախապատրաստվել էր հեքիաթի ներքին խտացումներով, հերոսի ապրումներով ու կյանքի փորձով<sup>4</sup>»:

Հայ գրականագիտության մեջ կա այն կարծիքը, որ Հովհաննես Թումանյանը ժողովրդական բանահյուսական նյութերի գրական մշակման նախապատվությունը տվել է պոլիլինյան, առանձին դեպքերում նաեւ գյոթեական սկզբունքների կիրառմանը, բայց դա չի նշանակում, որ Թումանյանը մեխանիկորեն հետեւել է գրական այդ երկու մեծություններին, այլ նա, որպես հայկական միջավայրի ճնշումը, որպես գրող, աստվածային ներքնատեսություն ունեցող բացառիկ մեծություն, առաջադրել է իր՝ գուտ բումանյանական սկզբունքները, մեթոդներն ու եղանակը: Եվ պատահական չէ, որ Թումանյանը այդ սկզբունքի կիրառումով էլ ստեղծել է «Թմկաբերդի առումը», «Հազարան բրդուր», «Մատուցի Գավիթը», «Քաջ Նազարը», «Չարի վերջը», «Մի կաթիլ մեղրը», «Այրամարը», «Թագավորն ու չարիքն», «Շունն ու կատուն», «Լուսավորչի կանթեղը», «Որբը», «Մուկիկի մահը» եւ այլ անմահ գործերը:

<sup>1</sup> Գ.Ա.Թ., Ավ. Իսահակյանի դիվան, փալեր. 610-11, էջ 9: Առաջին անգամ հրատարակվել է մեր՝ «Հակոբ Հարությունյան» փիմանկար-փալերագրության աշխատության մեջ, Ե. 1985, էջ 70-71:  
<sup>2</sup> Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 260:  
<sup>3</sup> Ա. Գանալանյան, Դրվագներ հայ բանագիտության պատմության, Գ.Ա.Երևան, Ե., 1985, էջ 130:  
<sup>4</sup> Վ. Մարգարյան, նշվ. աշխատ., էջ 38:

Նույն սկզբունքների կիրառումով էլ թարգմանել է Գրիմ եղբայրների հեքիաթներից մի քանիսը, Պուշկինի «Ոսկե ձկնիկը», եւ օգտվելով գրական հայերենի եւ բարբառների ներքին հարստություններից՝ ստեղծել է բնագրերին համարժեք գրական ոճեր ու արտահայտություններ:

Հովհ. Թումանյանը, վերջնականապես մերժելով իր վայ-ընդդիմախոսներին, գրում է, որ հեքիաթների գրական մշակումներն ավելի մեծ ջանքեր են պահանջում, քան գրույցներն ու ավանդապատումները՝ նշելով նաեւ, որ «իմ կարծիքով ես միայն մի հեքիաթ եմ մշակել կարգին (գուցե չնչին պակասություններ ունենա, ով գիտի), եւ դա «Քաջ Նազարն է<sup>1</sup>»: «Եվ որովհետեւ, երբ ասում են հեքիաթ, առակ, լեգենդ, ամեն գրականությունից տարրական հասկացողություն ունեցող մարդը, մինչև իսկ ռամիկը,- շարունակում է գրել մեծ գրողը,- գիտեն, որ էդ կնշանակի ընդհանուր, ժողովրդական ստեղծագործություն, որ ամեն մարդ էլ կարող է նյութ առնել ու գրելով, պատմելով, փոփոխելով, ավելացնելով ու պակասեցնելով, հեռանալով կամ մոտիկ մնալով: Եվ ահա Պուշկինն էլ էսպես է պատմում, շատ «մոտ» ու հավատարիմ մնալով բնագրին, եւ նրա գրածը արդեն ժողովրդական չի եւ չի կարող ու չի էլ գրում վրեն ժողովրդական<sup>2</sup>»:

Մրանք Թումանյանի մի քանի նկատառումներն են ժողովրդական բանահյուսական նյութերի գրական մշակման սկզբունքների ու եղանակների կիրառման մասին:

Դ. Դեմիրճյանը տարբեր առիթներով հանգամանորեն քննության է առել Թումանյանի լեզուն, թումանյանական ոճը, ժողովրդական բանահյուսական նյութերի թումանյանական գեղարվեստական մշակման եղանակը՝ նշելով, որ «Նախ եւ առաջ նա ժողովրդական նյութի մեջ ընտրություն է անում՝ բազմաթիվ վարիանտներից ընտրում ամենակատարյալը: Ապահովելով նյութի կրասիկ ամբողջականությունը՝ նա գտնում էր այդ հում նյութի (գրական-գեղարվեստական մշակման համար) կառուցման, ոճի, լեզվի այն գրական ձևերը, որոնք դառնալով գրական՝ չեն կորցնում ժողովրդական ձևերի հարազատությունը: 2) Իհարկե, Թումանյանի ժողովրդական նյութերի գրական մշակությունն իր աստիճանավորումն ունի գրական բարձր ձևերի (ինչպես նաեւ բովանդակության) վերելքի մեջ: 3) Թումանյանը ընտրում է ոչ թե Գյոթեի սկզբունքները, այլ Թումանյանն իր մշակումները տանում է Պուշկինի, իր մյուս ուսուցչի գծով: Նրա նման համառոտաբան, կուռ, հյութեղ, հարազատ», 4) «Թումանյանը արվեստին հաղորդեց այն ուրույն հատկությունները, որ բարձրացնելով Թումանյանին, բարձրացնում է նաեւ մեր պոեզիան, կուլտուրան<sup>3</sup>»:

Տրված են միանգամայն ճիշտ, դիպուկ եւ գեղեցիկ բնութագրումներ, որոնք նյութի ուսումնասիրության համար ունեն ելակետային նշանակություն:

Արդ՝ սեսենք, թե Թումանյանը ինչպես է գրականացրել «Քաջ Նազար» հեքիաթը:

Իբրեւ գործողության կատարման տեղ՝ երեքն են՝ Քաջ Նազարի տունը (մի անանուն գյուղում), որի մասին չի էլ հիշատակվում մինչև այն պահը, երբ Նազարը դիմում է գյուղի տերտերին՝ հայանի **քաջաբերականը** գրել տալու նպատակով, ապա անտառը, հետո՝ հսկաների գյուղը, որը եւ դառնում է քաղաքանիստ:

Իբրեւ փոխադրամիջոց՝ տնից դուրս գալու պահին խղճուկ էլն էր, ապա պատահաբար գտած ձին, իսկ թշնամիների վրա հարձակվելիս՝ «Նժույզ ձին»: Վազրը խորհրդանիշ է եւ հեքիաթային: Որպես գեներ՝ միայն մի հին ժանգոտած թուր, բայց եւ հեքիաթայինը՝ փտած ծառից պատահաբար պոկած «գետնաչափ ճյուղը»:

Միջավայրը, տեղանքը, բնական պայմանները, արկածների պահերին հանդիպած մարդիկ (գյուղացիներ, «օխտ հսկաներ», թշնամական բանակի զինվորներ) իրական են, երկրային, ունեն իրենց անձնական հետաքրքրությունը, շահերը, նպատակը, մի խոսքով, իրական էակներ են: Պատահականը փաստարկված է իրական գծերով, լրացվում է բնության տեսարանների նկարագրություններով: Քաջ Նազարի արկածները պատճառաբանված են եւ իմնավորված: Իսկ դրանք կենդանացել ու շունչ են առել Թումանյանի գրողական հանճարի ոգեկոչումներով, հայերենի գրական, տարածական միավորների, առանձնապես Լոռու խոսվածքի լեզվական տարբեր շերտերի համադրումով, լեզվական առանձին գործոնների թումանյանական ոճավորումներով, ժողովրդական առավել հղկված բանաձևումներով, պատրաստի ոճերի ու ձևերի՝ խոսքի հյուսվածքում, նախադասության մեջ, պարբերությունների կառուցվածքում ստեղծագործելով, խոսքի միջուկը զարդարանման ուրույն եղանակով: Դրանք այնքան կուռ են ու սերտ միասնության մեջ, ճշտիվ ամրակայված, բառապատկերված, ասես՝ այդպես էլ պետք է լինել սովյալ նյութի բնագրային վիճակը: Մա է, որ շփոթության մեջ է զգել «պսալիկ ուղեղ» ունեցող բննադատներին, որոնց թվացել է, թե հանճարեղ գրողն իր ձեռքի տակ ունեցել է հեքիաթի մի անհայտ տարբերակ, որ ձևի եւ բովանդակության տեսակետից ոչ միայն կատարյալ է, այլև անբերի եւ անխոցելի:

Թումանյանը գերազանցապես հենվել է ոճական հստակ խոսքամիավորների վրա, որոնք կոչում ենք կերպատույք, այսինքն՝ պատրաստի դարձվածքներ, հեղինակի կողմից ստեղծված թեւավոր խոսքեր, բառակապակցություններ, բայական վերլուծական կառույցներ: Կերպատույքները լինում են խոհական, խրատական, հեզնական, հաստատական, ժխտական, հուզական, հրամայական, կոչական եւ այլն:

«Քաջ Նազարի» լեզուն գրական հայերեն է: Մակայն հեղինակը այն համեմել է Լոռու խոսվածքի եւ այլ բարբառների ոճական արժեք ունեցող բառերով ու արտահայտություններով, մեծիմասամբ փորձել է դրանք մաքրել մեղ բարբառային բանձրույթներից՝ մեծեցնելով ժողովրդական տարբերակներին կամ գրական ձևերին:

<sup>1</sup> Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 472:  
<sup>2</sup> Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր երկու հատորով, հ. 2, Երևան, 1985, էջ 361:  
<sup>3</sup> Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու՝ 8 հատորով, հ. 8, Երևան, էջ 133-134:



1. **Լռու խոսվածքից վերցված բառեր եւ արտահայտություններ**  
ա) անորոշ դերբայ՝ *իլ վերջավորությամբ*՝ «որ մենակ լուրջի առաջ *դնիք*» (էջ 152) «բա չես *ասիք*» (էջ 153), «որ մի *ասիք*» (էջ 157).

բ) անկանոն *գալի րալ* բայերի անորոշ դերբայ՝ առանց վերջահնչյուն *ւ-ի*. «ու պոնգին վեր *գալի*», «իշիցը վեր է *գալի*» (էջ 154), «իբենց միջի խելոքն էլ դուրս է *գալի*» (էջ 156), «Էստեղ Նազարի շունչը անդն է *գալի*», «Ամերն էլ Նազարի երեսին են մտիկ *րալի*» (էջ 158):

Մակայն առանձին դեպքերում չեն չարաշահված բարբառային ձևերը, այլ գործածված են տվյալ բայերը՝ *իս* մասնիկով, ինչպես՝ «ճանճերը *գալիս* են սրա քիթ ու պոնգին վեր *գալի*», ըստ որում՝ առաջին միավորը ներկայացնում է շարժում, իսկ երկրորդը՝ հետևանքային, անշարժ դրություն, «Էս հսկաները վերելից մտիկ են ապիս» (էջ 157):

2. **Լռու խոսվածքին բնորոշ հնչյունափոխական հարկանիշներ**  
ա) է-ի դիմաց *ի*, էջ *իշի* («իշին նստում») (էջ 154), «իշից վեր գալի» (էջ 154),  
բ) *այ-ի* դիմաց *է(ե)*, *ծայր>ժ էր* (փետի ծերին, նետի ծերին) (էջ 155), *այս, այդ, այն* > էս, էդ, էն: Մա արդեն թումանյանական ոճ է:

3. Որոշյալ դերանուններից ամենից բնորոշը *միև(ը)*, որ ոչ միայն յուրահատուկ է Թումանյանին, այլ 19-րդ դարի գեղարվեստական ու գիտահրապարակախոսական լեզվին, ինչպես՝ «*Միև* էլ ետ է նայում» (էջ 154), «*միևը* բռնում է իր կողքը նստածին» (էջ 155), «Ամեն *միևը* մի գուրգ ուներ» (էջ 157), «Մարդիկ *միև* էլ տեսնում են» (էջ 158), «*Միև* էլ տեսնում է աշխարհը իր բռան մեջ» (էջ 151):

4. Գոյականի *բացասական, ներգոյական* հոլովներում որոշիչ *ը(ն)* հորի առկայություն՝ «գորտերը կանաչից *ն* են ջուրը թափում» (էջ 154), եկել են իրենց հանդում *ը* վեր է եկել» «էլ փորում *ը* սիրտ չի մնում» (էջ 157):

5. Հետադարձ *վրեճ* կապի տարածքայնություն՝ «իբենց գեղեցիկ քույրը սիրահարվում է *վրեն*», «*վրեն* տապ կենում» (էջ 158), «*վրեն* երգ են կապում ու երգում» (էջ 159). *վրեն // վրա* ձևերի իմաստային նրբերանգով գործածություն՝ «պատերազմով գալիս է օխտն ախար *վրա*» (էջ 160):

6. *Յոք (ն)* քանակական քվականի բարբառային՝ *օխար*. «*օխար* հսկա եղբայրներ», «*օխարն* ահեղի հսկաներ կանգնած», «*օխարն* ախպեր ենք», «*օխարն* օր», «*օխար* գիշեր»:

Դարձվածային միավորներ արժեքավորմամբ՝ Թումանյանի գրական մշակումներում խոսքի կենսատու երակը, բանաստեղծական թռիչքը, գրաբարից, միջին հայերենից եւ հայերենի տարածական միավորներից անցած պատրաստի ձևերի, ասույթների ժողովրդական բանաձևումների նմանությունը ստեղծված բառային, լեզվաբանաստեղծական նորակերտումները հաճախ այնքան են բնական ու պատկերավոր, որ թվում է, թե դրանք ժողովուրդն է ստեղծել դարերի ու հազարամյակների ընթացքում՝ իր հին ու նոր կենսափոխություններով:

Դարձվածքների բազմիմաստ ու ոճապատկերային ներծավումները՝ խոսկան ու փոխափայլական ներդաշնակումները կառուցված միջուկային նախադասությունների յուրահատուկ ոճավորումներով, Թումանյանը առաջադրել է լեզվաբանաստեղծական ուրույն մի համակարգ, որով նա մնացել է ժողովրդական բառ ու բանի մեծ գիտակ, հեքիաթի եւ գրույցի գրական մշակման անկրկնելի մեծություն:

Եվ որովհետեւ, արդ, խոսքը գնում է «Քաջ Նազարի» մասին, բերենք այնտեղ առկա դարձվածային միավորները՝ «*Չենդ կարի, րեղդ նարի, բարվան կարողիս մարիկ արա*», «*Հողն էր վախկոտ գլուխը*» (էջ 152), «*Որ միև զարկի ջարդի հազար*», «*Նազարը չենն ավելի է գլուխը գցում*», «*Դու մի ասիլ*», «*Ականջ ոչ լսի*», «*Վա յ, ո՞նց թե իմն էլ էարեղ էր հարկնել*» (էջ 154), «*Դե ղոնախն ասարածունն է*», «*Մուտրի վերի ծերին բազմեցնում*», «*Աշիդ էլ բարին րեանի*», «*Ծառան ի՞նչ են անում, աշխարհի իմ ծառան ու իմ ծառան*», «*Ամբողջ հարսնիքում դարձում է թե բա չես ասիլ նորեկ ղոնախն է ինքը*» (էջ 155), «*Աշուղն է, որ էարեղ էր, չեռաց երգ է հորինում ու երգում*», «*Մի մարդ է եկել իրենց հանդումը վեր է եկել*», «*Մարդերը կծում են հսկաները*», «*Էսպես բուրբները ցամաքած*» (էջ 157), «*Էլ փորումը սիրտ չի մնում*», «*Շնորհ անես զաս մեր հացը կարես*», «*Էսպես Նազարի շունչը րեղն է գալիս*», «*Վազր է լուս ընկնում էս երկրում*», «*Վերեւ մի ասարված, ներքեւ քաջ Նազար*», «*Հոգին դառել է կորեկի հասր*», «*Նազարը որ վագրի չի րեանում, լեղին ջուր է կարում*», «*Աչքերը սեւանում են*» (էջ 158), «*Օխարն օր, օխար գիշեր հարսանիք*», «*Քաջ Նազարը վագրին չի է շինել հեծել*», «*Ափսոս արնջի՞ սպանեցիք, գոռով մի չի էի շինել նարել*» (էջ 159), «*Օխար հսկա գլուխ են րալի առաջը կանգնում*» (էջ 160), «*Էլ փորներումը սիրտ չի մնում*», «*Երես են շուռ րալիս*», «*Միև էլ րեանում է աշխարհը իջր բռան մեջ*» (էջ 161) «*Ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար, դարարի բաներ են բոլորը*», «*Բանը մարդու բախարն է*», «*Բախար ունե՞ս, քե՞ք արա*» (էջ 162):

Հեքիաթի ամբողջ շարադրանքում «Դու մի ասիլ» դիմողական-սքափեցնող-գորացնող դարձվածք (լիլիոն) նույն ձևով հանդիպում է չորս անգամ, մեկում միայն՝ «*Բա չես ասիլ*» (հասկացիլ, իմացիլ) իմաստով՝ «*Բա չես ասիլ ղոնախն է ինքը*»:

Հեքիաթի երեսուրդու կենսաբանական զարգացումը միազիծ է՝ վախկոտ-պարկոտից մինչեւ քաջի համբավ ձեռք բերելը, մինչեւ թագավոր դառնալը: Բայց մի պատկեր կա, որը թեև ստեղծված մի փոքրիկ պարբերության մեջ, ունի իմաստային ներքին խորք, որ կարող է եւ հիմք դառնալ սյուժետային նոր գծերի բացահայտման ու գործողության ծավալման համար՝ «*Եվ լուրը գնում րարածվում է գորքի ու ժողովրդի մեջ, լրպեսների միջո-*

*ցով էլ հասնում է թշնամուն, թե Քաջ Նազարը մենակ առանց գորքի թռչում է դեպի պարտերազմի դաշտը, հագիլ են կարողացել զայել ու շրջապարված բերում են*» (էջ 161-162):

Թումանյանի «Քաջ Նազարը» հեքիաթի լեզվական մասնակի բնութագրումը ցույց է տալիս, որ խոսքը հյուսվածքում հիմնական ծանրությունը, ներքին շրջապական կապը նուրբ անցումները, պատմեաձևի աշխուժության շունչն ու ոգին բայ-ստորոգյալներն են, որոնք հանդես են բերված բազմաձևությամբ, համանշային հարստությամբ, գրական եւ բարբառային համարժեքներով, հաճախ նաեւ պարսաղիլի շարույթ-արժույթային կրկնությամբ, մի դեպքում՝ իբրեւ նախադասությունը վերջավորող բառ, մյուսում՝ սկսվող մի ամբողջական միավոր, մեկի վերջը մյուսի սկիզբն է: Այնպես օրինակ՝ «*Նրա հեղ շենին է դուրս գալի: Որ շենին է դուրս գալի՝ րեանում է ճրքճրքան լուս-լուսնյակ գիշեր*»:

Այս *գիշեր*-ը դառնում է փաստարկի հաջորդ խոսքոսկի համար՝ «*Ա՛յ կնիկ, ի՛նչ քարվան կտրելու գիշեր է...*», «*գնամ քարվան կարեւ րեւեւ րունը լցնես*» (էջ 152) (զուգարական երեք բայ՝ ներքին որոշակի աստիճանավորումով), «*Ինչքան աղաչում-պաղատում է, որ կնիկը դուրը բաց անի, չի լինում, բաց չի անում*» (բոլոր բառերն էլ գտնվում են բայ-ստորոգյալի արամաբանական ու շարահյուսական փնջի մեջ, նրա տիրույթում), «*Ճարը կտրած գնում է մի պատի սակ կուչ է գալի, դողալով գիշեր անց է կացնում*» (ենթական գեղջված է, մինչեւ լույսը բացվում է) է. «*Չեղք տանում է երեսին զարկում: Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդվում են առաջին վեր թափում*» (էջ 153): «*Գնում է, գնում*» «*Շար է գնում, քիչ է գնում...* ինքը կիմանա, *գնում է ընկնում է մի գյուղ, ինքը գյուղին*» անծանոթ, *գյուղն* իրեն (էջ 154), (գյուղը մի դեպքում խնդիր է, մյուսում՝ ենթակա). «*Ծառա ինչ են անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու ծառան*» (էջ 155), «*Գնում-հասնում է մի կանանց դաշա: Էս կանանց դաշում ձին թողնում է արածի*», «*Նազարն իր բունն առնում է ու զարթնում է. որ զարթնում է, այրերը բաց է անում...*» (էջ 157) եւ այլն:

Քաջ Նազարի հարսանյաց հանդեսին կատարվում են նրա «անգուզական քաջությունը» փառաբանող երգեր եւ թագավորավեր: Թումանյանը այդ շարքից ընտրել է երկուսը եւ այնպես է ոճավորել, որ կարծես այդ երգերն իրոք հորինել են զուսանները եւ գալիս է դարձրել հեռավոր:

Նազարի հայտնի քաջաբերականում տերտերը խորհրդավորության պատրանք ստեղծելու նպատակով գրել է՝ «Անհաղթ հերոս Քաջըն Նազար», այսինքն՝ այնպես, ինչպես բնութագրական է կրոնավորներին, սակայն հարսանքավորների խոսքը բնական հնչեցնելու կերպավորմամբ՝ «*Ով Քաջ Նազար*», ինչպես՝

*Էս աշխարհքում,  
Մարդկանց շարքում,  
Ով կրչինի քեզ հավասար,  
Ով Քաջ Նազար:  
Ինչպես ուրուր,  
Կայծակ ու հուր,  
Բարձր բերդից թռար հասար,  
Ով Քաջ Նազար:  
Ահեղ վագրին  
Արիք քո ձին,  
Հեծար անցար դու սարեսար,  
Ով Քաջ Նազար:  
Մեզ փրկեցիլ,  
Ազատեցիլ,  
Փառք ու պատիվ քեզ դարեդար,  
Ով Քաջ Նազար:*

Այս երգը, զուր լինելուց բացի, հեքիաթի դրության կոմիքսի ծայրակետն է՝ շարված նազարականության բուն էություն ճակատին: Երբորդ տողը, որ վանկային կառուցվածքով կարելի է համարել երկու տող, խտացնում է Նազարի կատարած «սխալները»:

Եվ այս դյուրահավատ ամբոխն էլ որոգայթել է Քաջ Նազարին:  
Հայ ժողովրդական հարսանեկան-ծխական տարածված երգերից է «Թագվորի գովքը», որը տարբեր բնակավայրերում ունեցել է իր խոսքը եւ նույնքան տարբեր մեղեդին: Դրանք հոգեւոր երգերի նման ունեն կրոնական լրջություն ու հանդիսավորություն: Այդ շարքի երգերի կատարումը ուղեկցել են ծխական բեմադրություններով, նորաստեղծ հարազատների, նաեւ հագուստ-կապուստի քվարկման հանդիսավորությամբ, տարվել է տղամարդկանց տարբեր ծայրերի ներդաշնակություններով:

Թումանյանին հայտնի են եղել «Թագվորագովքերը»՝ իրենց մի շարք տարբերակներով հանդերձ: Մեծ գրողը չի ընտրել արամաբախի ծայրերակներին եւ ոչ մեկը, այլ ուրախություն ու ցնծություն արտահայտող առավել հանդիսավոր եւ զավեշտական տողեր ու բառակներ, ինչպես, օրինակ՝

*- Լուսնկան նոր սարն էլամ,  
- Էն ո՞նց նրման էր:  
- Լուսնկան նոր սարն էլամ,  
Էն Քաջ Նազարն էր:  
- Արեգակ նոր շաղեշաղ,*

<sup>1</sup> Թումանյանը այս դեպքում քաջը մեծատառով չի գրում:

Էն ո՞ւմ նրան էր:  
- Արեգակ նոր շաղկապ,  
Էնի իր Նազ, յարն էր: (էջ 159-160)

Այստեղ բանաստեղծական հայտնությունը «Նազար» բառի հանգավորմանը համահունչ «Նազ-յարն» է, որը կրկնվում է միայն վերջում՝ «Իր Նազ-յարին շնորհավոր»:

Շարունակության մեջ Թումանյանը անմիջապես տվել է սովորական կանոններ՝ ածականին, որ մերթ հանդես է գալիս իբրև հատկանիշ, մերթ իբրև իսկապես կարմիր՝ հարբած լինելը, եւ կամ այս անգամ արդեն արյան պատմության հազած «թագվոր»- թագավորը:

Հեքիաթային սեւ աշխարհից Քաջ Նազարը ոտք է դրել Կարմիրը, եւ դեռ նրան շատ հեռու է այնքան երազած սպիտակը:

Ահա եւ նորընծա թագավորի գովքը.

- Մեր թագավորն էր կարմիր,
- Իրեն արեւն էր կարմիր,
- Թագն էր կարմիր, հա՛յ կարմիր,
- Կապեն կարմիր, հա՛յ կարմիր,
- Գոտին կարմիր, հա՛յ կարմիր,
- Սուրբ կարմիր, հա՛յ կարմիր,
- Կարմիր թագուհին բարեւ,
- Կարմիր թագավորին բարեւ:

Կարմիր էր եւ թագուհին: Պալատում ամեն ինչ կարմիր էր. գահ էր բարձրացել մի նոր կարմիր թագավոր, որի մուտքը ազդարարվում է «Ողջ աշխարհին շնորհավոր» պարզեւմունով:

Թումանյանը բառ-պատկերային կրկնությամբ եւ դրանց դիրքային տեղաշարժերով ժողովրդական երգը գրկել է ծխական բնական երանգից՝ այն դարձնելով հեզոնախառն, երգիծական եւ կենցաղակերպ վիճակից աստիճանաբար մտել քաղաքական ասպարեզ՝ Նազարի թագավորությունը ներկայացնելով կարմրամշուշ ու արևագույն:

Դեռ պիտի փառք տալ, որ մեծ գրողն այս գործը գրել է 1912-ին, իսկ եթե այն թվագրվեր մի քիչ ավելի ուշ՝ ասենք՝ 1917-20 թթ., ու գիտի, թե ի՞նչ կարմիր ու կարմրավուն ենթադրությունների տեղիք պիտի տար այս հրաշալի պատկերը, մեր օրերում պետական ո՞ր անհատին պիտի վերագրվեր այդ գարմանալի կարմիր, կարմիր սուրբը:

Հեքիաթն իրոք մնացել է հեքիաթ, Քաջ Նազարն էլ՝ նույն հեքիաթի անգուգական հերոսը, որ մշտապես ուղեկցել է մարդկությանը՝ գրեթե բոլոր ժամանակներում:

Հայտնի է, որ զեղարվեստական արձակում հերոսների կերպավորման համար մեծ արժեք ունեն երկխոսություններն ու մենախոսությունները, դրանք կարող են հանդես գալ իբրև երկխոսություն-վիճարանություն, երկխոսություն-բնութագրում, երկխոսություն-նկարագրություն, մենախոսություն-ինքնաբացահայտում:

Թումանյանը «Քաջ Նազար» հեքիաթում կերտել է 18 երկխոսություն: Դրանք խոսքի նուրբ խառնուրդներ են, դարձվածաբանության կամ դարձվածային:

- Ահա.
- Հապա ինչպե՞ս է, որ մի կարգին բուր չունի, եւ ժանգոտ երկաթի կտորն է մեջքին կապել:
- Ընդհանր էլ հենց դրա մեջ է, որ էս երկաթի կտորով մին գարկես ջարդես հազար, թե չէ լավ բրով, ի՞նչ կա որ, սովորական քաջերն էլ են ջարդում» (էջ 155):

Մենախոսություն. «Վա՛հ, ասում է,- ես էսպես փղամարդ եմ էղել ու մինչեւ էսօր չեմ իմացել... Ես, որ մի գարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնգա կողքին վեր ընկել...» (էջ 153):

«Նազարը որ ուշքի է գալիս, լեզուն բացվում է: - Ափսոս,-ասում է,- ընչի՞ սպանեցիք, զոռով ձի էի շինել նարեւ... Էնքան պեղք է բռնի որ...» (էջ 159):

Հեղինակային ծանուցումները ներկայացված են սահմանական եղանակի ներկա ժամանակով՝ «ասում է», «գարմանքով հայտնում են անծանոթները», «արդավորվում են», «ծիծաղում է, ասում է» (ի դեպ հեքիաթի շարադրանքը եւս տարված է նույն ժամանակաժամով, որն ասես ավելի է կենդանի դարձնում խոսքը:

Հիշյալ գործերում, մանավանդ «Քաջ Նազար» հեքիաթում, Թումանյանը մեծապես օգտվել է կողմնակի ուղղակի խոսքի ներծավման՝ ինքնաբերականություններից, որով էլ հեղինակի խոսքը ստացել է փոխկերպարվող բնույթ ու գործառույթ:

Հեղինակի փոխկերպարվող խոսքը կարող է լինել կարճադաս եւ ծավալուն: Թումանյանի խոսքը սեղմ է ու հակիրճ. սա է նրա էպիգրամի յուրահատկությունը, բառային ու ասույթային փաստերի լիարժեքության, առանց անորոշության, իմաստային ցրվածության, որոնք սովորաբար արտահայտվում են ցուցական, հարաբերական, անորոշ դերանուններով, Թումանյանի գրչի տակ այլևս չեզոք բառեր չեն, այլ խոսքի շղթայում, ձուլվելով բառ-պատկերներին, դարձել են զեղարվեստական մանրաքանդակներ, խոսքային զարդարանվածք՝ բայական բազմարժույթ դրսևորումներով:

Հարկ է նշել, որ նախադասական յուրաքանչյուր միավոր խոսքի շղթա է մտել որոշակի արժեքի տեսքով՝ չունենալով անորոշություն կամ պատրանքային երեստականության նույնիսկ թույլ երանգներ:

Ահա եւ մի երկու օրինակ.

«Էնքան էլ վախկոտ, էնքան էլ վախկոտ, որ մենակ ոտք ոտի առաջ չէր դնի, քեկուզ սպանեիր» (էջ 152), «Բախարդ սիրեմ քաջ Նազար, զոռզոռալով գալիս է փեսանում մի քամբած ձի ճանի մեջքերը կանգնած իրեն է սպասում» (էջ 154), «Հարսանքավորները հեքիաթը բերում են իմանան, թե ով է էս փարփոհնակ անծաւորը» «...Էսպեսով հասնում է մինչեւ դռան փակը, ու ամբողջ հարսանքարունը դրամիում է թե՛ բա չես ասի նորեկ դուռնախն է ինքը»

Անհաղթ հերոս Քաջն Նազար, Որ մին գարկի ջարդի հազար» (էջ 153):

«Իրենց միջի խելոքն էլ դուրս է գալի ճառ է ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց էինք լսել քո հոշակը, կարող էինք երեսդ տեսնելու եւ ասա էսօր բախտավոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր մեջ» (էջ 156):

«Վա՛յ, Քաջ Նազարն է՛...- մատները կծում են հսկաներն ու մնում են տեղները սառած»: «Մենք լսել էինք քո ահավոր անունը, տեսությանդ էինք փափագում. այժմ բախտավոր ենք, որ քո ոտով ես եկել մեր հողը: Մենք, քո խոնարհ ծառաներդ, օխտն ախպեր ենք, ահա մեր ամբոցն էլ էն սարի գլխին է՛ մեջը մեր գեղեցիկ բույրը: Աղաչում ենք շնորհ անես գաս մեր հացը կտրելու» (էջ 157): «Առաջն են ընկնում, բռնում են, խնդրում, թե ախր առանց զենք ու գրահի մենակ ո՞ր ես գնում, ի՞նչ ես անում, գլխիցդ ձեռք ես վերցրել, ի՞նչ է՛»:

Այսպես կարելի է շարունակել:

Թումանյանի հեքիաթը ունի ժողովրդական փոխկերպարության իր հայեցակետը, որի համաձայն բոլոր ժամանակներում երբեմն դրոշմային տերն են դառնում նազարակերպ մարդիկ: Սրանք չունեն ո՛չ ազգայնություն, ո՛չ էլ դավանանք:

Միանգամայն ճիշտ է բնութագրել գրականագետ Ս. Աղաբաբյանը, նշելով, որ Թումանյանին գրավել է նախ եւ առաջ դրանց համամարդկային, վերժամանակային եւ վերտարածական բովանդակությունը, «հավերժական ճշմարտության փոխկերպարական մոտիվը, որը արտահայտել է էպոսային չափանիշներով՝ վերանայով կերպարի պատմականացումից եւ «սովորականացումից», «որ զանգվածներն իրենց ամբողջավարական հոգեբանությամբ ոչնչությունից կոտրեր են ստեղծում եւ բարձրացնում պաշտամունքի պատվանդանին»:

Դեմիրճյանը «Ժամանակակից հայ գրական լեզվի զարգացման տեղեկները» ծավալուն հոդվածում, բնութագրելով Արուսյանից մինչեւ Տերյան անցած ուղին, մասնավորապես անդրադառնում է Թումանյանի լեզվին՝ նշելով, որ նրա օրով ահա գրական լեզվի մշակման խնդրում առաջ եկան նոր հասկացողություններ - աշխարհաբար գրական լեզվի եւ բարբառների փոխարարբերության խնդիրներ: Նա կանգնեց այդ շարժման գլուխը: Թումանյանը գրական լեզվի խնդրում առաջադրեց նոր սկզբունքներ: Կարող ենք ասել, որ նա հանդես եկավ իբրև «նորարար», բայց եւ առաջ անցնելով «ժողովրդական ոճերի, դարձվածքների հետ միասին նա լեզվի մեջ մտցրեց նաեւ ժողովրդական լեզվի քերականական ձեռքը», սակայն «բառերի քերականական դրույթը՝ հողվունքը, ածանցները, խոնարհումը, դերանունների միաձեռնությունը, ինչպես նաեւ համաձայնությունը,- հեղինակի իրավունքը չեն, դրանք լեզվի կոնստիտուցիոն վիճակն են, նրա հիմնական, օրգանական դրույթը, որին դիպչել չի կարելի՝ առանց ընդհանուրի թույլատրության, թեև ոճի խնդրում էլ սահման կա՞»:

Այնուհետև ինչ-որ տեղ կրկնելով Չարենցին (հասկանալի պատճառով առանց նրան անունը տալու) հանգում է հետևյալին. «Եվ ահա երբ Թումանյանը ժողովրդական լեզվի քերականությունը մտցնում է ոչ թե հերոսների, այլ հեղինակային լեզվի մեջ՝ ուրեմն դրանց քաղաքացիությունը ապիս գրական լեզվի մեջ՞»:

Դեմիրճյանը, հետևելով Չարենցին, բավական խիստ չափանիշներով է բնութագրում Թումանյանի լեզուն, բայց եւ այնպես իրականության դեմ չէր կարող մեղանչել՝ ընդունելով, որ մեծ գրողի թե չափաժո եւ թե արձակ խոսքը բնական կուտ պատկերներից է կերտված, ժողովրդի իմաստությամբ ծիծաղված ու ծավալված, կենդանի է ու հյծաբեղ, անկերձ ու անմիջական, այնուհանդերձ թե՛ Չարենցը եւ թե՛ Դեմիրճյանը ակնհայտորեն դժկամությամբ են ընդունում Թումանյանի լեզվի առաջնության տալը, բայց ոչ նրա զեղազիտական համակարգը՝ գտնելով, որ Իսահակյանի, Տերյանի, Չարենցի, Բակունցի ստեղծագործական թռիչքը չէր լինի առանց Թումանյանի բերած լեզվաճանաչման ու զեղարվեստական հարստության, որովհետև «Նա կենդանի շունչ մտցրեց մայրենի լեզվի մեջ՝ ժողովրդական լեզվից վերցնելով թարմ դարձվածքներ, ոճական ասույթներ եւ բայեր,-ավելացնում է Դ. Դեմիրճյանը,- դա պետք էր նախ եւ առաջ իրեն՝ Թումանյանին, որի թեման շատ է հանրածանոթ... Այդ ձեռնարկից օգտվեց նաեւ մեր գրական լեզուն. դա անժխտելի է: Պատկերացրեք մեր գրականությունը եւ մասնավորապես գրական լեզուն առանց Թումանյանի... Ավելացնենք, Հովհաննիսյանին պիտի հաջորդեր Տերյանը, որի լեզուն չէր ունենա թերես այն կենդանությունը, որ տեսնում ենք Տերյանը բողոքում է ճոռմարանության դեմ՝ շնորհիվ իր երկու հոգր նախորդների՝ Թումանյանի եւ Իսահակյանի՞»:

Ամփոփելով բերված փաստերն ու նրանցից բխող բացատրությունները՝ կարելի է հանգել հետևյալին:

1) Քաջ Նազարը թափառիկ հերոս է եւ կա նաեւ այլ ժողովուրդների բանահյուսության մեջ՝ իբրև հեքիաթ, գրույց, ավանդապատում: Նա ըստ էության չունի ազգային պատկանելություն, հայրենիք, դավանանք: Բայց դա չի նշանակում, թե Քաջ Նազարը իջել է երկնքից, հրաշածին է՝ չունենալով բնապատմական իր իրական աշխարհը, խիստ տեղայնացված միջավայրը, էթնահոգեբանական ծագումաբանությունը, մարդակերպությունը:

1 Ս. Աղաբաբյան, Հայ սովետական գրականության պատմություն, հ.1-ին, Երևան, 1980, էջ 364:  
2 Դ. Դեմիրճյան, հ.8, էջ 380:  
3 Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ.8, էջ 381:  
4 Անդ., էջ 381  
5 Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ.8, էջ 384:

Բերված փաստերն ապացուցում են, որ նազարակապույթյան փիլիսոփայությունը իր յուրատեսակ դրսևորումն է գտել «Սասնա ծռեր» էպոսում՝ պարփակված Վերգոյի կերպարի մեջ: Իսկ Դրժիկոնը, սերվելով այդ ակունքից, երգիծարանայ՝ մի հետաքրքրական գրույց է, հեքիաթ՝ ունենալով իր սյուժեն, կերպարները եւ հերոսները:

Խնդիրն այն է, որ թե Հովհ. Թումանյանի, թե Դ. Դեմիրճյանի եւ թե Մ. Սարգսյանի (հեքիաթ, կատակերգություն, վեպ) ստեղծագործություններում գործում է հեքիաթի հերոս Քաջ Նազարը, որի նախատիպն ընդունված է ճանաչել Դրժիկոնին, չնայած նույն անունը կրող բանահյուսական գրեթե հուն-հյուսիս Մեծն Թումանյանի գրչի տակ ստացել է նոր ձև ու բովանդակություն: Հեքիաթայինը տիրաբար իր թելերն է տարածել նկարագրական բոլոր մանրամասների վրա եւ սնուցում է սյուժետային գծի ծավալումները, իր ամբողջ հասակով մեկ վեր է ծառանում երկիրը կառավարելու նազարական փիլիսոփայությունը, ծառանում է եւ միայն ինքն իր դեմ՝ Նազարը Նազարի դեմ, որ իր գոյությունն արդարացնելու համար, այսպես թե այնպես, փորձում է գտնել իրեն ժողովրդի գլխից վեր պահելու հենասյուներ, մի եղկելի տափակաբանությամբ որոճում աշխարհի ու մարդկանց, բախտի ու ճակատագրի, պատահականի ու պատահականության, անհասանկին հասանկի դարձնելու հավանական ու անհավանական դատարկաբանությունները, վերջին հաշվով նաեւ աշխարհը իր բռի մեջ պահելու ցնորամիտ նկրտումները:

2) Այսպես ուրեմն՝ Քաջ Նազարը հեքիաթի երեսակայական հերոս չէ միայն, այլ բնական՝ իր խեղճուկրակ կեցվածքով, կենցաղով ու սովորություններով, իրեն ծնող հանրությամբ, պարծենկոտությամբ ու սնապարծությամբ ինքնակա մի յուրահատուկ ծայրահեղականություն, որ ամեն վայրկյան կարող է փուլովել, կործանվել, անհետանալ իրականի եւ երեսակայականի տեսական հակասությունների պատճառով:

Նազարի նախատիպը համարելով էպոսի Վերգոն՝ ճիշտ է այնքանով, որ հայ ժողովրդական բանավեստում թեև կան նազարատիպ այլեւայլ հերոսներ, սակայն ոչ մեկն էլ այնքան անհատականացված չէ, որքան Վերգոն՝ իբրև վախկոտության, մեծգության ու ստորության մարմնացում: Մնացած բացնասական գծերը լրացնում է նրա դժնատեսի ծառանգը՝ Աստղիկ Ցուլածինը:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ ժողովրդական վեպի Վերգոյի եւ հեքիաթի Նազարի բնավորության գծերի, արարքների ու գործելակերպի միջոց կան զգալի ընդհանրություններ, մանավանդ թագավոր դառնալու անհազ տենչանքի, դրան հասնելու եւ երկիր կառավարելու, աշխարհի վրա արքայական գահից չարախնդալու նկրտումներում:

3) Հովհ. Թումանյանը բանահյուսական նյութը սուկ գրական մշակման չի ենթարկել, այլ ինչպես ճիշտ է բնորոշել գրականագետ Հրանտ Թամրազյանը՝ «Ժողովրդական խորհուրդներին հաղորդում է հավերժական հնչողություն, նորագույն դարում բացահայտում բոլոր ժամանակներին հարազատ մարդասիրական լսուհիքը, - այսինքն՝ հնագույն պատմությունից ոսկե հատիկը», որ նշանակում է, թե մեծ գրողն իր հանճարի պայծառ լույսով ստեղծել է արդեն հեղինակային անմահ կոթողներ՝ ավանդություններ, հեքիաթներ, առակներ, պատմվածքներ, պոեմներ: «Աստված Թումանյանին տվել է ներքին սեսողություն՝ անշուր, աննշան, փոքրիկ նյութի մեջ տեսնել ոսկի հատիկը, թաքուն խորհուրդը: Եվ նա բացել է այդ խոր հանքը ու փայլ տվել, հարստացրել ու բյուրեղացրել»- եզրակացնում է բազմախորհուրդ գրականագետը:

Մեծն Թումանյանը, այնուամենայնիվ, զեղարվեստական անկրկնելի կոթողներ ստեղծելով հանդերձ դարձյալ ու դարձյալ զեղարվեստական բարձր չափանիշների հաշվառումով է խոսում իր այս կամ այն երկի մասին:

Հարկ է նշել, որ Թումանյանի «Քաջ Նազարի» անգուզակնությունն էր բացառիկ լինելու գրավականը արդյունք է ոչ թե բանահյուսական նյութերի համակցման, այլ գրողը կիրառել է լեզվական բազմաձայնումը, որ արվում է ներսից՝ խոսքի միջոցիկ նուրբ զարդաբանումով, փոխկապակցված է ինքնուրույն կիրառություն ունեցող կերպասույթներով, որն ավելի տարողունակ է եւ ընդգրկում՝ իր մեջ խոսացնելով տարբեր դարձվածքներ, թեւավոր խոսքեր, բայական վերլուծական կառույցներ, երկխոսություններ եւ խոսքի սարխմաստ միավորներ:

Մրանք ծավալման մեջ լրացնում են մեկը մյուսին եւ հանդես են գալիս իբրև համարժեք միավորներ՝ ունենալով խոհախրատական, դատողաբանական, հեզմական, հաստատական, ժխտական, զգացական, հրամայական, կոչական եւ այլ երանգներ, որով էլ լցվում-հարստացվում-գորացվում է կերպասույթը:

Ոճապատկերայինի համակարգում խոսքի կենսատու երակները, մտաթոխքը հայերենի տարբեր մակարդակներից եւ տարածական տարբերակներից վերցված դարձվածային միավորներն են ընդհանրապես, այլևս հեղինակային նորակերտումները, որով եւ Թումանյանը ներկայանում է որպես ժողովրդական բառ ու բանի մեծ գիտակ, հեքիաթի, գրույցի, առակի գրական մշակման անկրկնելի մեծություն:

**С.М.СААКЯН. - Творческие вариации, литературные разработки, речевое искусство армянского народного романа "Верго" и сказки "Храбрый Назар".** Руководствуясь формулировками в произведении Чаренца "Проблема языка подчиняется жанру", в настоящей статье исследовались фольклорные связи сказки "Храбрый Назар", связанные с известным образом народного эпоса "Сасна Црер" Верго, одновременно приведены литературные разработки этой сказки, обстоятельно охарактеризован "Храбрый Назар" Ованеса Туманяна.

Исключительность этой работы Ованеса Туманяна обусловлена специфической языковой полифонией в разработке материала, что применялось Комитасом в разработках армянских народных песен.

# ՂԵՎՈՆԳ ՎԱՐԳԱՊԵՏԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ԲԱՌԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱԾԱՆՅՄԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ)

ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հետդասական հայերենի զարգացումն ընթանում է լեզվի կառուցվածքային տարրերի քանակական-որակական փոփոխությունների ուղիով եւ հասարակական-քաղաքական կյանքի՝ լեզվի վրա ունեցած դերի հարաճումն ազդեցությամբ:

5-8-րդ դարերում լեզվի տարածամասնակյա փոփոխությունների պատկերն ըստ ամենայնի վեր է հանել Ա.Այտընյանը՝ նկատելով, որ դրանք «մեծ մասամբ նախընթացային համեմատութեամբը նորերուկ բաներ են եւ հետետրոյին նկատմամբ հնութիւնը են կամ հիմունքը»<sup>1</sup>:

Ա.Այտընյանը լեզվական տվյալ գոյալիճակում (8-րդ դար) «նորերուկ բաներ» է համարում նաեւ նոր բաների առաջացումը (էջ 124):

Լեզվում նոր բաների առաջացումը կապվում է բառային փոխառությունների եւ հեղինակային նորակազմությունների հետ:

8-րդ դարի հայերենի բառային կազմի հարստացման գործում իր նպաստն է բերել նաեւ Ղեւոնդ Վարդապետ պատմիչը, որ սերունդներին է ավանդել «Պատմութիւն» (կամ «Ժամանակագրութիւն») երկը:<sup>2</sup>

Ղեւոնդի մատյանում հանդիպում են բառային նորակազմություններ, առաջին անգամ գործածված դարձվածային միավորներ, փոխառություններ, բարբառային բաներ եւ գրաբարյան շերտի բաներ՝ նոր նշանակություններով<sup>3</sup>:

Ուսումնասիրելով Ղեւոնդի երկի հեղինակային նորակազմությունները՝ նկատում ենք, որ նա կիրառել է լեզվի բառակերաման ներքին միջոցները՝ բարդությունն ու ածանցումը:

Լեզվաբանական գրականության մեջ բարդ եւ ածանցավոր բաներն անվանում են բաղադրյալ բաներ, որոնց կաղապարների մեջ տարբերակում են միջուկային եւ առմիջուկային անդամները. ընդ որում բաղադրյալ տեսակները որոշվում են բաղադրիչների բնույթով<sup>4</sup>:

Բաղադրյալ կառուցվածքում միջուկի դերով հանդես է գալիս արմատը, որ ձեւավորում է բառակազմական հիմք, իսկ որպես առմիջուկային բաղադրիչ՝ համատիպ որեւէ միավոր կամ էլ կախյալ որեւէ ձեւույթ: Երկրորդ բաղադրիչը կոչվում է ածանց, ածանցավոր բառի սերունդ՝ ածանցում: Համատիպ բաղադրիչներով բաղադրությունը կոչվում է բարդություն, իսկ որպես սերունդ՝ բարդում<sup>5</sup>:

Ածանցումն ու բար լումը (բառաբարդումը) դիտվում են իբրև բառակազմության գլխավոր եղանակներ:

Հին հայերենի բառակազմական կաղապարները ներկայացվում են այդ երկու հիմնական խմբերով: Յուրաքանչյուր խմբում առանձնացվում են հիմնականապարներ եւ դրանց մասնականապարները:

Հիմնականապարը բնութագրվում է բաղադրիչների քանակով ու կազմով, մասնականապարը՝ ըստ հիմնականապարի կազմի միավորների կրած փոփոխությունների, ինչպես նաեւ սկզբնահիմքերի խոսքիմասային արժեքի<sup>6</sup>:

Ներկա հոդվածի շրջանակներում մենք կփորձենք քննել Ղեւոնդի երկի այն նորակազմությունները, որոնք ստեղծվել են ածանցման կաղապարներով<sup>7</sup>:

Բաղադրյալ իմաստակառուցվածքային պլանում կարելի է առանձնացնել լեզվական հակադրվող երկու միավոր՝ անկախ առկա ձեւույթների քանակից<sup>8</sup>: Այդպիսի անդամատուրը սկսելով ոչ թե բաղադրյալ, այլ բա-

<sup>1</sup> Ա.Այտընյան, Բնական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, ԵՊՀ հրատ., Ե., 1987, էջ 124:  
<sup>2</sup> Տե՛ս Ղեւոնդի Վարդապետի Պատմութիւն, Մ. Պետերբուրգ, 1887:  
<sup>3</sup> Ղեւոնդ Վարդապետի երկի դարձվածային միավորների բնությունը տե՛ս Լ.Լ.Խաչատրյան, Գրաբարի դարձվածային միավորների ձեւաբանական-կառուցվածքային ախտերն ըստ Ղեւոնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի («Լրաբեր» հաս. գիտությունների, Ե., 1998, N1):  
<sup>4</sup> Գ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի բառակազմություն եւ իմաստաբանություն, Ե., 1989, էջ 158:  
<sup>5</sup> Անդ:  
<sup>6</sup> Լ.Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 57:  
<sup>7</sup> Ղեւոնդի նորակազմությունների բառաբարդման կաղապարների բնությունը մենք կանդրադառնանք ստանձին հոդվածով:  
<sup>8</sup> Բառային մակարդակում այդպիսի անդամատուր կատարելու եւ բառակազմական հնարավոր կաղապարներ ստանալու նպատակով բաղադրյալ կառուցվածքային տարրերը կարելի է նշանակել հետեւյալ պայմանական ստառերով s-սկզբնահիմք, a-ածանց, f-բերականական մասնիկ, j-հայկական, p-ուսխալոր (տե՛ս Լ.Հովսեփյան, Նշվ., աշխ., էջ 56): (Ղեւոնդի նորակազմությունների կառուցվածքը քննելիս մենք կիրառելու ենք Լ.Հովսեփյանի առաջարկած բառակազմական կաղապարները):